ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/11-1»

«07» հունիսի 2019թ.

ք. Երևան

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Սուքիասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված քարթրիջները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ձնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2 621 820 (երկու միլիոն վեց հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011022085 ՀՎՀՀ 02505554	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ ք. Երևան, Վարդանանց 18/2 «Էվոկաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1660000446270100 ՀՎՀՀ 00861057
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
«07» հունիսի 2019 թ. կնքված
«ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-19/11-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
Հր.նախ. չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատես-ված միջանցիկ ծածկա-գիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	հասցե	ենթակա քանակը	ժամկետը
1.	30121500/79	1.քարթրիջներ PATRON FL	Ninestar Corporation ՉԺՀ	HP LJ Q5949A/7553A/708/715, նախատեսված HP LJ P2015dn լազերային տպիչների համար, առնվազն 3000 էջ տպող,գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	2850	256500	90	Հանրապետության տարածքում՝ ըստ պահանջագրերի	27	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										27	2019թ. III եռամսյակ
										36	2019թ. IV եռամսյակ
2.	30121500/80	2.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ Q2612A/FX-10/703, նախատեսված HP LJ 1020, HP LJ P1010dn, HP LJ 1015, HP LJ 1018, Canon LBP 2900 և Canon LBP 3000 լազերային տպիչների համար, առնվազն 2000 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	237600	120		35	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										35	2019թ. III եռամսյակ
										50	2019թ. IV եռամսյակ
3.	30121500/81	3.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CE505A/CF280A/719, նախատեսված HP LJ P2055n, Canon LBP 6670, i sensys LBP 6300 և	Հատ	2730	464100	170		50	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը

				HP LJ P2035n լազերային տպիչների համար, առնվազն 2300 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:						50	2019թ. III եռամսյակ
										70	2019թ. IV եռամսյակ
										2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
4.	30121500/82	4.քարթրիջներ PATRON FL	Ninestar Corporation ՉԺՀ	CANON C-EXV18, նախատեսված Canon iR 1020 լազերային տպիչների համար, առնվազն 2300 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	4080	24480	6		2	2019թ. III եռամսյակ
										2	2019թ. IV եռամսյակ
										2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
13.	30121500/91	13.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ Q2613A/Q2624A/C7115A, նախատեսված HP LJ 1000 լազերային տպիչների համար, առնվազն 2500 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	3270	19620	6		2	2019թ. III եռամսյակ
										2	2019թ. IV եռամսյակ
										30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
19.	30121500/97	19.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CE278A/726/728, նախատեսված Canon MF 4580 և Canon MF 4410, Canon i-sensys MF 4730, Canon i-sensys MF 4140 լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, առնվազն 2100 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	198000	100		30	2019թ. III եռամսյակ
										40	2019թ. IV եռամսյակ
										3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
25.	30121500/103	25.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CB435A/CB436/CE285X/712/725, նախատեսված HP LJ 1102 լազերային տպիչների համար, առնվազն 1600 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	2010	20100	10		3	2019թ. III եռամսյակ

										4	2019թ. IV եռամսյակ
32.	30121500/110	32.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	CANON EP-26/27, նախատեսված Canon MF 3110 և Canon MF 3200 լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, առնվազն 2500 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	2640	52800	20		6 6 8	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը 2019թ. III եռամսյակ 2019թ. IV եռամսյակ
33.	30121500/111	33.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CB435A/CB436/CE285X/712/725, նախատեսված Canon LBP-6030B, Canon LBP 6000B լազերային տպիչների համար, առնվազն 1600 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	99000	50		15 15 20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը 2019թ. III եռամսյակ 2019թ. IV եռամսյակ
34.	30121500/112	34.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CB435A/CB436/CE285X/712/725, նախատեսված Canon LBP-3010 լազերային տպիչների համար, առնվազն 1500 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	49500	25		7 8 10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը 2019թ. III եռամսյակ 2019թ. IV եռամսյակ
35.	30121500/113	35.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	XEROX 106R02183, նախատեսված Xerox workcentre 3045 լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, առնվազն 1000 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1134	11340	10		3 3 4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը 2019թ. III եռամսյակ 2019թ. IV եռամսյակ
37.	30121500/115	37.քարթրիջներ NetProduct	VTT-Don ՉԺՀ	Xerox 106R02778, նախատեսված Xerox phaser 3260 լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար,	Հատ	7080	106200	15		5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը

				առնվազն 5000 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:						5	2019թ. III եռամսյակ
										5	2019թ. IV եռամսյակ
41.	30121500/119	41.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	KYOCERA MITA TK-1170 , նախատեսված Kyocera M2040dn լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, չօգտագործված, առնվազն 7200 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	4950	198000	40		12	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										12	2019թ. III եռամսյակ
										16	2019թ. IV եռամսյակ
42.	30121500/120	42.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	KYOCERA MITA TK-3130 , նախատեսված Kyocera M 3550 լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, չօգտագործված, առնվազն 25000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7410	59280	8		2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										2	2019թ. III եռամսյակ
										4	2019թ. IV եռամսյակ
43.	30121500/121	43.քարթրիջներ Hi-Black	VTT-Don ՉԺՀ	KYOCERA MITA TK-590Bk, նախատեսված Kyocera M 6026 լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 7000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	11880	11880	1		1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը

44.	30121500/122	44.քարթրիջներ Hi-Black	VTT-Don ՉԺՀ	KYOCERA MITA TK-590C, նախատեսված Kyocera M 6026 լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 5000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը կապույտ, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	11880	11880	1		1	2019թ. III եռամսյակ
45.	30121500/123	45.քարթրիջներ Hi-Black	VTT-Don ՉԺՀ	KYOCERA MITA TK-590M, նախատեսված Kyocera M 6026 լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 5000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը կարմիր, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	11880	11880	1		1	2019թ. III եռամսյակ
46.	30121500/124	46.քարթրիջներ Hi-Black	VTT-Don ՉԺՀ	KYOCERA MITA TK-590Y, նախատեսված Kyocera M 6026 լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 5000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը դեղին, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	11880	11880	1		1	2019թ. III եռամսյակ
47.	30121500/125	47.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	KYOCERA MITA TK-1120 , նախատեսված Kyocera FS 1025 լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 3000 էջ տպող, գույնը սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	99000	50		15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										15	2019թ. III եռամսյակ
										20	2019թ. IV եռամսյակ

48.	30121500/126	48.քարթրիջներ NetProduct	VTT-Don ՉԺՀ	Samsung MLT-D205L, նախատեսված Samsung 4833FD լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, առնվազն 5000 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7920	7920	1		1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
50.	30121500/128	50.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CE278A/726/728, նախատեսված HP LJ P1606 լազերային տպիչների համար, առնվազն 2100 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	99000	50		15	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										15	2019թ. III եռամսյակ
										20	2019թ. IV եռամսյակ
51.	30121500/129	51.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CE410A Black (№305A), նախատեսված HP LaserJet M451dn լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 2200 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	4950	14850	3		1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										1	2019թ. III եռամսյակ
										1	2019թ. IV եռամսյակ
52.	30121500/130	52.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CE411A Cyan (№305A), նախատեսված HP LaserJet M451dn լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 2600 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ կապույտ, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	4950	14850	3		1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										1	2019թ. III եռամսյակ
										1	2019թ. IV եռամսյակ
53.	30121500/131	53.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CE413A Magenta (№305A), նախատեսված HP LaserJet M451dn	Հատ	4950	14850	3		1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը

				լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 2600 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ կարմիր, գործարանային փաթեթավորմամբ:						1	2019թ. III եռամսյակ
										1	2019թ. IV եռամսյակ
										1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
62.	30121500/140	62.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CF226A, նախատեսված HP LaserJet Pro MFP M 426dw լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 3000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ դեղին, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8100	24300	3		1	2019թ. III եռամսյակ
										1	2019թ. IV եռամսյակ
										2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
67.	30121500/145	67.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ Q2613A/Q2624A/C7115A, նախատեսված HP LaserJet 1200 series լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 2000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	3270	19620	6		2	2019թ. III եռամսյակ
										2	2019թ. IV եռամսյակ
										3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
68.	30121500/146	68.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CB435A/CB436/CE285X/712/725, նախատեսված HP LJ M 1120N լազերային տպիչների համար, առնվազն 2000 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	19800	10		3	2019թ. III եռամսյակ
										4	2019թ. IV եռամսյակ
										3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
69.	30121500/147	69.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ Q7551A, նախատեսված HP LJ 3005N լազերային տպիչների համար, առնվազն 6500 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված,	Հատ	5940	53460	9		3	2019թ. III եռամսյակ

				գործարանային փաթեթավորմամբ:						3	2019թ. IV եռամսյակ
										6	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
74.	30121500/152	74.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CC364A/CE390A, նախատեսված HP LJ 600 M601 լազերային տպիչների համար, առնվազն 10000 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8400	168000	20		6	2019թ. III եռամսյակ
										8	2019թ. IV եռամսյակ
										3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
76.	30121500/154	76.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	HP LJ CF244A, նախատեսված HP LJ Pro MFP M28w լազերային տպիչների համար, առնվազն 1000 էջ տպող, գույնը՝ սև, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8100	81000	10		3	2019թ. III եռամսյակ
										4	2019թ. IV եռամսյակ
77.	30121500/155	77.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	XEROX 106R01634, նախատեսված Xerox Workcenter 6015 լազերային գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 2000 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	1980	1980	1		1	2019թ. III եռամսյակ
83.	30121500/161	83.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա/ ԱՄՆ/ՄԹ/ Ճապոնիա	EPSON T08114A Black, նախատեսված Epson 1410 գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 480 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8400	16800	2		2	2019թ. III եռամսյակ

84.	30121500/162	84.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա/ ԱՄՆ/ՄԹ/ Ճապոնիա	EPSON T08124A Cyan, նախատեսված Epson 1410 գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 855 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ կապույտ, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8400	8400	1		1	2019թ. III եռամսյակ
85.	30121500/163	85.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա/ ԱՄՆ/ՄԹ/ Ճապոնիա	EPSON T08134A Magenta, նախատեսված Epson 1410 գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 855 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ կարմիր, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8400	8400	1		1	2019թ. III եռամսյակ
86.	30121500/164	86.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա/ ԱՄՆ/ՄԹ/ Ճապոնիա	EPSON T08144A Yellow, նախատեսված Epson 1410 գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 855 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ դեղին, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8400	8400	1		1	2019թ. III եռամսյակ
87.	30121500/165	87.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա/ ԱՄՆ/ՄԹ/ Ճապոնիա	EPSON T08154A Light Cyan, նախատեսված Epson 1410 գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 855 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ բաց կապույտ, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8400	8400	1		1	2019թ. III եռամսյակ
88.	30121500/166	88.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա/ ԱՄՆ/ՄԹ/ Ճապոնիա	EPSON T08164A Light Magenta, նախատեսված Epson 1410 գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 855 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ բաց կարմիր, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	8400	8400	1		1	2019թ. III եռամսյակ

89.	30121500/167	89.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա	EPSON T6731 Black 70մլ., նախատեսված Epson L805 գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 1800 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7200	7200	1		1	2019թ. III եռամսյակ
90.	30121500/168	90.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա	EPSON T6732 Cyan 70մլ., նախատեսված Epson L805 գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 1800 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ կապույտ, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7200	7200	1		1	2019թ. III եռամսյակ
91.	30121500/169	91.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա	EPSON T6733 Magenta 70մլ., նախատեսված Epson L805 գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 1800 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ կարմիր, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7200	7200	1		1	2019թ. III եռամսյակ
92.	30121500/170	92.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա	EPSON T6734 Yellow 70մլ., նախատեսված Epson L805 գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 1800 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ դեղին, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7200	7200	1		1	2019թ. III եռամսյակ
93.	30121500/171	93.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա	EPSON T6735 Light cyan 70մլ., նախատեսված Epson L805 գունավոր տպիչների համար, չօգտագործված , առնվազն 1800 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ բաց կապույտ, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7200	7200	1		1	2019թ. III եռամսյակ

94.	30121500/172	94.քարթրիջներ EPSON	EPSON Ինդոնեզիա	EPSON T6736 Light Magenta 70մլ., նախատեսված Epson L805 գունավոր տպիչների համար, չօգտագործված, առնվազն 1800 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ բաց կարմիր, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	7200	7200	1		1	2019թ. III եռամսյակ
99.	30121500/177	99.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	KYOCERA MITA TK-1160, նախատեսված Kyocera P2040dn լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, չօգտագործված, առնվազն 7200 էջ տպող՝ A4 ձևաչափի թղթի 5% լցվածության դեպքում, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	5400	32400	6		2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										2	2019թ. III եռամսյակ
										2	2019թ. IV եռամսյակ
103.	30121500/181	103.քարթրիջներ PATRON GREEN	PrinterMayin ՉԺՀ	KYOCERA MITA TK-1170, նախատեսված ECOSYS M2640idw լազերային բազմաֆունկցիոնալ տպիչների համար, չօգտագործված, առնվազն 2000 էջ տպող, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ:	Հատ	4950	24750	5		1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրը
										2	2019թ. III եռամսյակ
										2	2019թ. IV եռամսյակ

* *Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՊՇՏ ՖԼ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 07 » հունիսի 2019 թ. կնքված
«ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-19/11-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի												
			Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30121500/79	1.քարթրիջներ	-	-	-	-	-	76950	153900	153900	153900	256500	256500	256500	256500
2	30121500/80	2.քարթրիջներ	-	-	-	-	-	69300	138600	138600	138600	237600	237600	237600	237600
3	30121500/81	3.քարթրիջներ	-	-	-	-	-	136500	273000	273000	273000	464100	464100	464100	464100
4	30121500/82	4.քարթրիջներ	-	-	-	-	-	8160	16320	16320	16320	24480	24480	24480	24480
13	30121500/91	13.քարթրիջներ	-	-	-	-	-	6540	13080	13080	13080	19620	19620	19620	19620
19	30121500/97	19.քարթրիջներ	-	-	-	-	-	59400	118800	118800	118800	198000	198000	198000	198000
25	30121500/103	25.քարթրիջներ	-	-	-	-	-	6030	12060	12060	12060	20100	20100	20100	20100
32	30121500/110	32.քարթրիջներ	-	-	-	-	-	15840	31680	31680	31680	52800	52800	52800	52800
33	30121500/111	33.քարթրիջներ	-	-	-	-	-	29700	59400	59400	59400	99000	99000	99000	99000
34	30121500/112	34.քարթրիջներ	-	-	-	-	-	13860	29700	29700	29700	49500	49500	49500	49500
35	30121500/113	35.քարթրիջներ	-	-	-	-	-	3402	6804	6804	6804	11340	11340	11340	11340

37	30121500/115	37.քարթրիջներ	-	-	-	-	-	35400	70800	70800	70800	106200	106200	106200	106200
41	30121500/119	41.քարթրիջներ	-	-	-	-	-	59400	118800	118800	118800	198000	198000	198000	198000
42	30121500/120	42.քարթրիջներ	-	-	-	-	-	14820	29640	29640	29640	59280	59280	59280	59280
43	30121500/121	43.քարթրիջներ	-	-	-	-	-	-	11880	11880	11880	11880	11880	11880	11880
44	30121500/122	44.քարթրիջներ	-	-	-	-	-	-	11880	11880	11880	11880	11880	11880	11880
45	30121500/123	45.քարթրիջներ	-	-	-	-	-	-	11880	11880	11880	11880	11880	11880	11880
46	30121500/124	46.քարթրիջներ	-	-	-	-	-	-	11880	11880	11880	11880	11880	11880	11880
47	30121500/125	47.քարթրիջներ	-	-	-	-	-	29700	59400	59400	59400	99000	99000	99000	99000
48	30121500/126	48.քարթրիջներ	-	-	-	-	-	7920	7920	7920	7920	7920	7920	7920	7920
50	30121500/128	50.քարթրիջներ	-	-	-	-	-	29700	59400	59400	59400	99000	99000	99000	99000
51	30121500/129	51.քարթրիջներ	-	-	-	-	-	4950	9900	9900	9900	14850	14850	14850	14850
52	30121500/130	52.քարթրիջներ	-	-	-	-	-	4950	9900	9900	9900	14850	14850	14850	14850
53	30121500/131	53.քարթրիջներ	-	-	-	-	-	4950	9900	9900	9900	14850	14850	14850	14850
62	30121500/140	62.քարթրիջներ	-	-	-	-	-	8100	16200	16200	16200	24300	24300	24300	24300
67	30121500/145	67.քարթրիջներ	-	-	-	-	-	6540	13080	13080	13080	19620	19620	19620	19620
68	30121500/146	68.քարթրիջներ	-	-	-	-	-	5940	11880	11880	11880	19800	19800	19800	19800
69	30121500/147	69.քարթրիջներ	-	-	-	-	-	17820	35640	35640	35640	53460	53460	53460	53460
74	30121500/152	74.քարթրիջներ	-	-	-	-	-	50400	100800	100800	100800	168000	168000	168000	168000
76	30121500/154	76.քարթրիջներ	-	-	-	-	-	24300	48600	48600	48600	81000	81000	81000	81000
77	30121500/155	77.քարթրիջներ	-	-	-	-	-	-	1980	1980	1980	1980	1980	1980	1980
83	30121500/161	83.քարթրիջներ	-	-	-	-	-	-	16800	16800	16800	16800	16800	16800	16800
84	30121500/162	84.քարթրիջներ	-	-	-	-	-	-	8400	8400	8400	8400	8400	8400	8400

85	30121500/163	85.քարթրիջներ	-	-	-	-	-	-	8400	8400	8400	8400	8400	8400	8400
86	30121500/164	86.քարթրիջներ	-	-	-	-	-	-	8400	8400	8400	8400	8400	8400	8400
87	30121500/165	87.քարթրիջներ	-	-	-	-	-	-	8400	8400	8400	8400	8400	8400	8400
88	30121500/166	88.քարթրիջներ	-	-	-	-	-	-	8400	8400	8400	8400	8400	8400	8400
89	30121500/167	89.քարթրիջներ	-	-	-	-	-	-	7200	7200	7200	7200	7200	7200	7200
90	30121500/168	90.քարթրիջներ	-	-	-	-	-	-	7200	7200	7200	7200	7200	7200	7200
91	30121500/169	91.քարթրիջներ	-	-	-	-	-	-	7200	7200	7200	7200	7200	7200	7200
92	30121500/170	92.քարթրիջներ	-	-	-	-	-	-	7200	7200	7200	7200	7200	7200	7200
93	30121500/171	93.քարթրիջներ	-	-	-	-	-	-	7200	7200	7200	7200	7200	7200	7200
94	30121500/172	94.քարթրիջներ	-	-	-	-	-	-	7200	7200	7200	7200	7200	7200	7200
99	30121500/177	99.քարթրիջներ	-	-	-	-	-	10800	21600	21600	21600	32400	32400	32400	32400
103	30121500/181	103.քարթրիջներ	-	-	-	-	-	4950	14850	14850	14850	24750	24750	24750	24750

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 2019թ. կնքված
«ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/11-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2019թ. կնքված
«ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/11-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն